

— Հը, աղի, գնացիր, մարմար քարին ինչ ասել ի՛ առեցիր:

— Հա՞ որդի, գնացիր, ասեցիր. համայ չեմ գիտայ խօսք կլսի՛, թէ չէ:

— Թէ ասել ես, բայ հմի զրկած կը լի. գնա թագաւորի կուշ- տը, հարցրած տես էն մի ուզածն ինչ ա. թէզ արի, ինձ խա- բար բէ:

Մէրը վեր ա կենում էթում թագաւորի խնամաքարի վրա նոտում, թագաւորը էն սհաթը դուս ա գալի:

— Հը, մէրոյ, էլ էկել ե՞ս Տղէդ իմ ուզած մի ձեռք շորն էլ ա զրկէ. մնաց մի բան. թէ որ ըս էլ կարաց անի՛ հօ պրծած ա. աղջիկս ոտով գլխով տղինդ ա: — Իմ պալատիցը ընչանք ձեր տունը՝ պատի էնթափուր չորս ատէժ տներ շինի, որ պատերը սազ բուլիանտներով, մարդաններով, ակներով զարդարած ընի, որ ֆըրֆըրահար գայ՝ մարդի խելք գլխիցը տանի. — աղջիկս ըս- տիան՝ օթախների միջով գայ ձեր տունը՝ ընդիան գայ ըստէ, չըէս իմ մի ուզածն էլ էս ա. գնա աղիդ ասա. թէ արեց՝ հօ արեց. թէ չէ՝ էրկոփ էլ պատի քեալլայ անեմ:

Մէրը վեր ա կենում գալի տուն՝ Մօթալին ասում թագաւ- որի ուզածը. Մօթալին ասում ա.

— Էս հետ էլ գնա էն մարմար քարի կուշաը, ասա՝ Մօթալը քեզանից ուզում ա, որ թագաւորի պալատիցը ընչանք մեր տը- ները՝ էնթափուր չորս ատէժ տներ շինես, որ պատերը քօմմայ ակների բուլիանտների, մարդանների ձեռիցը ֆըրֆըրահար գայ:

Մէրն էթում ա էլի էն մարմար քարին իրեք հետ մատը քը- սում՝ ասում. — Մօթալը քեզանից էնթափուր չորս ատէժ տներ ա ուզում, որ թագաւորի պալատիցը ընչանք մեր տները ձգուի. քօմմայ օթախների պատերն էլ ակներով, մարդարաներով, զարդարած ընի; Ասում ա՝ եդ գալի տուն: Մօթալը հարցը- նում ա.

— Աղի, հը, ի՞նչ էլաւ, գնացի՛ր, մարմար քարին ասեցի՛ր:

— Հա՞ ոյ որդի, գնացիր, ի՞նչ որ թանբահ իր արէ՝ ասեցի:

— Բաս լաւ, առաւօտը թագաւորի ուզած օթախները հազիր կը լի. էս հետ էլ տենանք թագաւորը ի՞նչ պատի մհանայ բռնի՝ աղջիկը չտայ:

Դորթ որ, թագաւորը առաւօտը վեր ա կենում տենում՝ իրա ուզած չորս ատէժ տները հազիր ա: — Տնե՞ր, տնե՞ր եմ ա-

սում, որ տենողի խելք էր էթում։ Թագաւորը առեց — Էս հետ  
որ պառաւի տղէն աղջկանս տարաւ։

Մօթալի մէրը վեր ա կենում, թազայ շինած օթախների մի-  
ջովը էթում դուզ թագաւորի ինամաքարի վրա նստում։ Թա-  
գաւորը էն սհաթը դուս ա գալի։

— Հը, մէրայ. էկել ե՞ս. քա տղէ՞դ ուր ա. գէ գնա՛ բէ տե-  
նանք. — էս հետ որ աղջիկս նրան հալալ ա. էլ ասելու բան  
չունեմ։

Մէրը գալիս ա Մօթալին տառւմ, թէ թագաւորը կանչում  
ա. Մօթալին ա — թօլէթօլ ըլնելօն, թօլէթօլ ըլնելօն, օթախ-  
ների միջովը գալիս ա թագաւորի աղաքին կանում։ Թագաւորը  
Մօթալին որ տենում ա՝ մնում ա զարմացած, թէ էս ինչ թա-  
գուր իսան ա, որ ոնչ ոտ ունի, ոնչ ձեռ, ոնչ զադ, նւզում ա  
աղջիկը չտայ Մօթալին՝ համայ աղջիկը ինքը իրա բերնովն ա  
տառւմ։

— Զէ, այ հէր. ինչ որիս ա, ինձ դաբուլ ա. ես պտի զբան  
առնեմ. հալբաժ գրա մէջը մի հունար կայ։

Թագաւորն էլ ինչ պտի տաէր, որ աղջիկը ինքը զարուլ էր.  
Իերեց էրկախն էլ նշան գրեց՝ պսակեց — օխտն օր, օխտը քշեր  
հարսանիք արեց. Պսակից եղը, Մօթալը թագաւորի աղջկանը վէ  
կարաւ. տարաւ իրանց տունը։

Ասենք, թագաւորի աղջիկն ու Մօթալը իրար հենայ խօսում  
ին, զրից անում՝ համայ թագաւորի աղջիկը չէր իմանում, թէ  
Մօթալի միջին ինչ թագուր զադ կայ. Մի օր էլ, որ մարդ ու  
կուկ մէնակ ին մնացէ տանը՝ Մօթալը խրխու միջիցը գուս էկաւ,  
— գուս էկաւ, ի՞նչ գուս էկաւ, մի սիրուն, նաշխուն, թօյ ու  
բուսաթով տղամարդ, որ չուտէիր, չխմէիր՝ հէնց նրան թամաշ  
անէիր. ինչ ասեմ, մի խօսքով թագաւորի աղջկանիցը սիրուն։

Թագաւորի աղջիկը էս որ չտեհաւ, էն սհաթը վազեց փա-  
թթուեց Մօթալի ճոտվը՝ լաց էկաւ։

— Տնաշէն, ասեց. գու որ էս թալուր սիրուն տղամարդ իր,  
բա խի՞լը մեզ ըսենց լեզաճաք անում; թողում. բաս արի, թէզ,  
էս սհաթին էթանք հօրն ու մօրս կուշտը՝ մի տենան, նրանք էլ  
ուրախանան։

— Զէ, այ կնիկ, չէ. ես ըսենց եմ ստեղծուէ. Ասոծ. հրամա-  
յել ա, որ հուր յաւիտենական ես էս խրխու միջիցը գուս չգամ։

իսպիսին չերեւամ։ Ասենք դու, Հերն ու մէրգ ինձ տեհաք՝ բան չկայ, համայ ուրիշ մարգ չպահ տեհայ, թէ չէ վերջը փիս կըլինի։

Թագաւորի աղջիկը էն սհաթը գնաց հօրն ու մօրը ասեց իրա տեհածը։ Հերն ու մէրը ուրախացան՝ աշխարով մին էլան, համայ խեղճերը չին խմանում ինչ անեն, որ Մօթալը էլ խրխու մէջը չմնինի։

Վերջը միտք արին, որ մի օր թունգիրը վառեն՝ Մօթալին բութեն գցեն մէջը, բայի խրխին էրուի՝ պրծնի, Ըտենց էլ արին։ — թունգիրը լաւ թէժ վառեցին ու Մօթալին բռթեցին գցեցին կրակի մէջը, Խրիսին էրուեց, համայ խեղճ Մօթալին չկարացին եղ կրակի միջիցը հանի՛ ինքն էլ խրխու հենհայ էրուեց, մհձրուեց՝ քուլ դառաւ։ Նատ գլխներին վայ տուին, համայ էլ ո՞ւ բանիք բանից անց էր կացէ։

Մի քիչ կացան՝ տեհան էն քիի միջիցը մի նաշխուն, սիրուն ազունիկ գուռ էկաւ, թռաւ իրանց երգիկի վրա նստեց։

— Թագաւորի աղջիկը, ասեց աղունիկը, գու որ ինձ էս օրը գցեցիթ՝ քեզ էլ չի մնաց։ — Երկաթէ տրեխներ կհագնես, պողպատէ գաւաղան կառնես ձեռգ, լալով, լալաշկով կգաս եննուցս ման կգաս։ Էնքամ՝ ման կգաս, որ տրեխներգ կը ծակուի, գաւաղանիդ կէսը կմաշուի՝ որ նոր ինձ կգասնես։

Էս ասեց թէ չէ աղունիկը՝ թռաւ գնաց։ Խեղճ թագաւորի աղջիկը մնաց եննուցը սառած մտիկ անելոն։ Նատ միտք արեց, վերջը ասեց հօրն ու մօրը։ — պաի էրկաթէ տրեխս հագնեմ, պողպատէ գաւաղան առնեմ ձեռօ՝ էթամ՝ մարդիս եննուցը, աշխարէ աշխար, երկրէ երկիր ման գամ։ Էնքամ՝ ման գամ՝ որ գտնեմ։ Հերն ու մէրը աղջկանը զադաղայ չարին, ասեցին — էթում ես՝ գնա։

Թագաւորի աղջիկն ա։ Չորերը փոխեց՝ տղամարդի գէյմ մրտաւ, էրկաթէ տրեխներ հագաւ, պողպատէ գաւաղան առաւ ձեռը ու ընկաւ ճամփայ։ Գնաց, գնաց շատն ու փիճն Աստօն գիտայ՝ սարէ սար դիպաւ, քուէ քու դիպաւ, վերջը մի անմահական բաղչի ռաստ էկաւ։ Պատովը աշմիշ էլաւ բաղչէն՝ տեհական լաւ լաւ անմահական ինձորներ, տանձեր, հաւողներ ու հազար մի չէշուտ չէշուտ բար ու նուբարներ, որ տեհովի խելք էր էթում։ Համայ ո՞ր բարին մօտացաւ, որ պոկի ուտի՝ տեհաւ ձէն տուեց։ « բաղմանչի, ինձ կերան, հասի։ »

Վերջը տեհաւ որ չէ, ես բաղն էլ իրան տեղ չի տալի, որ գլուշերը ընդէ սիժար անի՛ դուս էլաւ ընդիան, գնաց Գնաց գնաց շատն ու քիչը Աստօծ գիտայ՝ մի ուրիշ գիւլի բաղի ռաստ էկաւ: Նի մտաւ մէջը՝ տեհաւ լաւ լաւ ամարաթներ, լաւ լաւ շէնքսեր: ասեց — Հաղբաթ ըստէ մարդ ա կենում: էթամ տեհնամ:

Ուսուլով ամարաթի գուռը բաց արեց՝ տուն մտաւ, տեհաւ սուփրէն գցած՝ հազար ու մի տեսակ կերակրներ վրէն գրած: Համայ որ ասես մարդ չի էրեւում: Կ'ո մի օթախը մտաւ, էն մի օթախը մտաւ՝ տեհաւ իսահաւորդի չկայ: Խնքն էլ զաթի սոված, նիստից ընկած՝ հէնց էս թափուր կերակրի էր ման գալի: Ասեց — հստեմ էս կերակրներիցը մի կուշտ կուռ էլա ուտեմ: Համայ խեղճը հէնց ո՛ր կերակրի վրէն ձեռ գրեց՝ տեհաւ ամանը շուռ էկաւ, թափուեց: Մալիսախ, ինչ արեց չարեց՝ չկարաց էն կերակրներից բերանը զադ գնի՛ մնաց էլ եղ սոված:

— Էրեւում ա, ասեց: որ էս կերակրները մի մարդի հմար են հազրէ: դու արի ես մննեմ: էս բուխարին, տափ կենամ: տեհնամ ո՞վ տ գալի էս կերակրներիցը ուտում: Մտաւ բուխարին՝ տափ կացաւ:

Անցկացաւ մի սհաթ, էրկու սհաթ: մըկ էլ տեհաւ էկան իրեք սիրուն, նոշխուն աղունիկ, խրիսիքը հանեցին վլրներիցը՝ տեհաւ իրեք ջահէլ, ջիվան տղէրք: Նոտեցին էդ սուփրի վբէն՝ կերան: մեր Մօթան էլ սրանց միջին էր: Կերան պրծան՝ ենննայ իրար կենաց խմեցին: Որ դօրը Մօթալին էկաւ՝ ստաքանը գինի լցրեց, ասեց — ըս էլ խմենք էն թագաւորի ու նրա աղջկաց կենացը, որ ինձ էս օրը գցեցին: Ասեց ու դարտկեց ստաքանը: Թագաւորի աղջիկը բուխարուց էս քօմմայ տենում էր:

Աղջիկը էնքամ կենում ա, որ հացները ուտում են պրծնում, ուզում են էլ եղ իրանց խրիսիքը հագնի թռնի՛ էն սհաթը բուխարու միջիցը դուս ա գալի, Մօթալի ճառին ընկնում, փաթթվում: «Քեզ էլ մեղաց, քու Ատեղծողին էլ մեղաց: ինչ էլաւ, էլաւ, բան չկայ» ասում ա ու աղբրի պէս արտասունքը աչքերիցը թափում:

Մօթալը կնկանը բաշխում ա ու էրկսով աղունիկ են ըլնում: թռնում — էլ եղ իրանց երկիրը:

(Նորունակէց)

Տ. Նորունակէտնաց: